



Հաճախորդը դիմել է Բանկ՝ վարկային գիծ ստանալու նպատակով, սակայն ոչ մի պատասխան չի ստացել վարկային գծի տրամադրման կամ մերժման վերաբերյալ, ապա ամսիներ անց անսպասելիորեն Բանկից հեռախոսազանգի միջոցով տեղեկացել է, որ Բանկի կողմից իրեն ոչ միայն տրամադրվել է վարկային գիծ, այլև վերջինիս հետ կապված առկա են չմարված պարտավորություններ: Հաճախորդը, խուսափելով վարկային պատմության հետ կապված հնարավոր խնդիրներից, Բանկի սպառնալիքների ներքո պարտադրված է եղել մարել պարտավորությունները, չնայած այն հանգամանքին, որ Բանկի կողմից չի տեղեկացվել վարկային գծի հաստատման մասին և չի ստորագրել վարկային գծի տրամադրման պայմանագիրը: Հետագայում Հաճախորդը այլ Բանկից վարկ ստանալու փորձ է կատարել, սակայն ստացել է մերժում՝ դասակարգված լինելու պատճառաբանությամբ:

Ծանոթ լինելով Հաշտարարի գործունեությանը, Հաճախորդը դիմել է վերջինիս՝ Բանկից պահանջելով փոխհատուցել իր մոտ առաջացած նյութական վնասը և վերականգնել խեղաթյուրված վարկային պատմությունը:

Ընկերության կողմից Հաշտարարին ներկայացված դիրքորոշումը Հաճախորդի պահանջի վերաբերյալ հետևյալն էր՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրի և Հաճախորդի անձնագրի պատճեններում եղած ստորագրությունների համեմատությունից հստակ երևում է, որ պայմանագիրը ստորագրված է Հաճախորդի կողմից, հետևաբար անիմաստ է մերժել՝ ասելով, որ պայմանագիրը ինքը չի ստորագրել:

Վերոնշյալ հարցի պարզաբանման նպատակով անհրաժեշտություն է առաջացել իրականացնել ձեռագրաբանական փորձաքննություն, որով պարզ է դարձել, որ կնքված պայմանագրում առկա ստորագրությունները կատարվել են ոչ թե Հաճախորդի, այլ մեկ այլ անձի կողմից: Փաստորեն՝ քննարկվող դեպքում Բանկի կողմից Հաճախորդին վարկը տրամադրվել է օրենքի և Բանկի ներքին Բանկի աշխատակցի իմացությամբ մեկ այլ՝ երրորդ անձի կողմից, ով թեև չի ունեցել համապատասխան պայմանագիրը Հաճախորդի անունից կնքելու լիազորություն, այնուամենայնիվ կնքել է այն՝ այդպիսով Հաճախորդին պատճառելով ոչ միայն նյութական վնաս, այլ նաև պատճառ հանդիսանալով Հաճախորդի վարկային պատմության աղավաղմանը: Ըստ ՀՀ օրենսդրության՝ իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս պատճառած վնասը:

Հաշտարարն այս նկատառումները ներկայացրել է Բանկին, ինչից հետո վերջինս համաձայնել է բավարարել Հաճախորդի պահանջը:

Այսպիսով, Հաշտարարի միջնորդությամբ կողմերի միջև ծագած վեճը լուծվեց հաշտությամբ: